ներ տալով շահին յուր իրավունքները վերականգնել ու պաշտոնանկ անել տալ խանին։ Կաթուղիկոսին ոգնեցին և ուրիշ գանգատավորներ. «Էր անդ և Լակզաց խանն, և նա ևս ասաց, Սաֆի խանն այնքան ապրանք առաքեաց ի տուն իւր, զի ես 3 (300) թուման մաքս առի, թող զբեռանցն»*։

Քաղաքական-տնտեսական այսպիսի պայմանների մեջ, կաթոլիկ հայերի վիճակի համեմատական թեթևությունը պապի և յեվրոպական արքունիքների բարեխոսությամբ, նոր խաչակրաց արշավանքի քարոզությունն ու քրիստոնյաների միացած ուժերի հաղթությունները օսմանցիների դեմ, վոր նկարագրված է նույն իսկ Գեղարդի վերոհիշյալ Հայամավուրքի հիշատակարանի մեջ Սուքիաս քահանայի կողմից, հարևան Վրաց ապստամբական շարժումները, վոր ավելի թանձրացյալ կերպարանք ստացան մի քանի տարի հետո՝ «միաբանել ընդ հյուսիսային թագրին Մոսկովու»**, միսիոնարների փսփսուկները տանջված կաթուղիկոսի ականջին Սպահանում յեղած ժամանակ, թե պապի միջնորդությունը ֆրանսիական թագավորին բավական կլինի նորա դառն վիճակի թեթևացման համար, յեթե միայն հնազանդի պապին***, վորին անձար կաթուղիկոսն ստիպված եր հավատալ, այս բոլորը մեզ հասկանալի յեն դարձնում Եջմիածնի ժողովի իրողությունը և վորոշումը՝ հայ մելիքների և հոգևորականների ներկայացուցիչներից մի պատգամավորություն ուղարկել Յեվրոպա, ոգնություն խնդրելու Հայաստանի ազատագրության միտքը գլուխ բերելու համար։ Ժամանակի տրամադրության համոզիչ հայտարարն և և վերոհիշյալ Պետիկի գիրքը, 1676 թվին, ուր ծերունի կաթուղիկոսի համար ասված է, թե հույս ունի այնքան ապրել, մինչև հաղթող հանդիսանան քրիստոնյաները մահմեդականների վրա խաչի նշանի տակ յուր քաջ հայկական զորքերով և հռոմեական ոգնական գնդերով։ Կաթուղիկոսի կողմից Պետիկը Պիսկոպոսի հետ բերում է և հնազանդության թուղթ Կղեմես Ժ.-ին և նամակներ յեվրոպական կաթոլիկ իշխաններին։ Նրան հանձնարարված եր նաև բերանացի խոսել կաթուղիկոսի «գաղտնիքի» մասին Լեոպոլդ կայսեր հետ[1]։

Այս բոլոր հանգամանքները հաստատում են Եջմիածնի ժողովի իրական բնույթն ըստ եությունն, վորի մասին տեղեկություն ունինք միայն քսան տարի հետո՝ Անգեղակոթում գումարված մելիքների գրությունների։

Մենք յերկար կանգ չենք առնի Որիի գործունեության մանրամասնությունների վրա, այլ կմատնանշենք միայն անհրաժեշտը նորա անձնավորությունն ու գործի արժեքը լուսաբանելու համար։ Մելիքների պապին գրած թղթի քաղվածքներից տեսանք (յերես 270), վոր Հակոբ կաթուղիկոսի մահվամբ 1680 թվին պատգամավորությունն ստիպված եր յետ դառնալ. Որին միայն շարունակում է հայ վաճառականների հետ ճանապարհը յուր խոսքի համեմատ՝ գլուխ բերելու պատգամավորության գործը. բայց մենք ել Աշոտ Հովհաննիսյանի հետ հավանական չենք համարում, վոր քսան տարեկան մի յերիտասարդի այդպիսի դժվարին և պատասխանատու գործ հանձնարարվեր. համենայն դեպս նա գրավոր փաստաթուղթ չուներ յուր ձեռքում այդ մասին, այլ միայն մի հանձնարարական՝ պատգամավոր յեպիսկոպոսներից մեկի կողմից*։ Պետք է ասել, վոր մինչև 1698 թիվը, յերբ արդեն փաստաթղթերի հիման վերա կարելի յե հետևել նորա կյանքի և գործի ընթացքին, միակ աղբյուրը Որին ինքն է այն զեկուցմամբ, վոր նա տալիս է յուր հովանավոր կուրֆյուրստին և ապա ռուսական կառավարության։ Յերեք ամիս Վենետիկում մնալուց հետո, անցնում է Ֆրանսիա, առաջին վեց տարին ծանոթանում է յերկրի հետ, իսկ յերկրորդ վեց տարին զինվորական ծառայության մեջ եր վորպես կամավոր, սկզբում տեղակալ սպա (порутчик) հետևակ զորքի մեջ և ապա վորպես հեծելազորի կապիտան։ Նամուրի պաշարման ժամանակ նա գերի յե ընկնում անգլիացիների ձեռքը, բայց թագավորից ազատության թուղթ ստանալով. անցնում է Դյուսելդորֆ, սկզբում իբրև վաճառական և ապա կուրֆյուրստին ծառայության մտնում**։ Որին կուրֆյուրստին գրած զեկուցման մեջ տալիս է մեզ ուրիշ տեղեկություններ ևս յուր կյանքի այս շրջանի մասին։ Նա առիթ է ունեցել դիմել Լուդովիկոս ԺԴ.-ին, բայց առանց հետևանքի, ինչպես յերևում է հետագա խոսքերից. անծանոթ լեզվին և յերկրի նիստ ու կացին, շրջում է ամբողջ Ֆրանսիան, առանց կարողանալու յուր գործի համար վոր և է բան կատարել։ Ապա ստիպված է լինում շքեղության իրերի վաճառականությամբ զբաղվել, վոչ կարիքի անհրաժեշտությունից, այլ վորպես զի առիթ ունենա ծանոթանալու զինվորական սպաների և ամեն կարգի մարդկանց հետ։ Պատերազմ հրատարակվելուց հետո, զինվորական ծառայության մեջ է մտել, մասնակից լինելով վեց արշավանքի. նրա նպատակն է յեղել կրկին խոսելու թագավորի հետ և մի մարդ խնդրելու, վորպեսզի յուր հետ Հայաստան գնա՝ ստուգելու իրենց նպատակի ճշմարտությունը***։ Այս ամենը նա պատմում է, վորպես զի կուրֆյուրստին պարզե, վոր նորա Յեվրոպա գալը և Ֆրանսիայում դեգերելը կապված եր յուր մինչ այդ անհաջող առաքելության հետ, վոր նորա կյանքի եությունը վաճառական դառնալը չեր կամ հարստություն ձեռք բերել, այլ հոգու մեջ մոխրի տակ թաղնված կայծի նման ապրում եր յուր հայրենիքի ազատագրության գաղափարը։

* Զաքարիա. Բ. 76—83։
** Ձեռ. Եջմ. № 1512. Հավել. Բ. 39.
***Chardin. III. 146—147։
[1] Aschot Ioahannissjan. Israel Ory. 47—49։

* Эзов. № 44. յեր. 92.
** Անդ. № 44. յեր. 93.
*** Aschot Iohannissjan. Israel Ory. Anhang № 4.